ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1705 16.05.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-գնդապետ

պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 11-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի ՁՊՎ արձանագրեց մի շարք խախտումներ և թերություններ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի խցերը գտնվում էին փոշոտ վիճակում:
2. Զուգարանում չէր գործում օդափոխման համակարգը և տհաճ հոտը տարածվել էր ամբողջ ՁՎ-ում:
3. Բուժմենյակի դեղարկղում առկա էր ժամկետանց յոդ, որի ժամկետը լրացել էր 2015թ-ի հուլիս ամսին: Ավելին՝ ունեին ժամկետի մեջ գտնվող յոդ, բայց չէին փոխել:

Խախտումներ՝

1. Արմավիրի ՄՎ Վաղարշապատի ՁՊՎ-ի վերանորոգման ընթացքում Արմավիրի ՁՊՎ-ն է ընդունել տվյալ բաժնի ձերբակալվածներին և <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում ձերբակալվածներին ընդունելուց միայն նշվել է նրանց ՁՊՎ ընդունելու ժամերը և ոչ մի կերպ հնարավորություն չկար պարզելու թե անձիք երբվանից են փաստացի անազատության մեջ գտնվել:
2. Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի Ա.Մ-ն ՀՀ ԱՆ <<Արմավիր>> ՔԿ հիմնարկ է տեղափոխվել 21.03.2017թ-ին ժամը 12.00-ին: Ըստ

ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան 79/45 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

3294

17 05 17

2388

17 05 17

<<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ խցից դուրս է բերվել և հետ չի վերադարձվել նույն օրը՝ ժամը 10.10-ից:

Դիտորդների հարցին թե <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում նշված ժամը 12.00-ն ինչ հիմքով է նշվել և որտեղից է վերցվել նրան ՔԿ հիմնարկ տեղափոխելու գրառման նպատակը, պատասխանատու ոստիկանը մեկնաբանեց, որ ուղեկցող դասակի ոստիկանները հեռախոսակապի միջոցով են տեղեկացրել նրա տեղափոխման մասին:Ըստ Դիտորդական խմբի՝ չենք կարծում, որ հեռախոսակապի միջոցով տրված ինֆորմացիան հիմք է հանդիսանում <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման >> գրանցամատյանում նմանատիպ գրառման համար:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Իսկանդարյան

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 31 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-2114 «20» 06 2017թ.

Ձեր 16.05.2017թ. թիվ 2621/1705 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Ս. Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Դիտորդների խմբի կողմից 2017թ. մայիսի 11-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով պարզվել է հետևյալը.

Թերություններ.

Նշված բոլոր թերություններն արդեն իսկ վերացվել են:

Խախտումներ.

1. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի վերանորոգման ընթացքում ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժնի կողմից ձերբակալված անձանց ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ ընդունելու վերաբերյալ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սունյակում նշվել է ձերբակալման ամսաթիվը և ժամանակը, այլ ոչ թե ՁՊՎ ընդունելու ժամանակը:

2. Ա.Մ-ն ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժնի կողմից 18.03.2017թ. ժամը 12:40-ին ձերբակալվել և նույն օրը ընդունվել է ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ: Խափանման միջոցի հարցը քննության առնելու նպատակով 21.03.2017թ. ժամը 10:10-ին վերջինս ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել է դատարան, ինչի մասին <<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում

կատարվել է համապատասխան գրառում, իսկ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվելուց հետո՝ ժամը 12:00-ին, վերջինս դատարանից տեխափոխվել է ՀՀ ԱՆ <<Արմավիր>> ՔԿՀ: Ինչ վերաբերվում է արդեն իսկ կալանավորված անձին ՔԿՀ տեղափոխելու ժամի վերաբերյալ հեռախոսակապի միջոցով ուղեկցող դասակի ծառայողներից տեղեկություններ ստանալուն և <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելուն, ապա այն օրինաչափ է, քանի որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և դատարանից ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ փաստաթուղթ ՁՊՎ վարչակազմին չի տրամադրվում:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ